

## «ԱՊԱՀՈՎ ՔԱՐՏ» ՔԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ապահովագրվում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից թողարկված Ձեր դեբետային քարտի օգտագործման ընթացքում Ձեզ հասցված ֆինանսական կորուստները և երրորդ անձանց հարձակման հետևանքով Ձեր առողջությանը պատճառված վնասը:



### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ՌԵՍՈ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 62 շ., 93-93/1  
Հեռ.՝ (+374 60) 50 57 57  
Կայք՝ www.reso.am



### ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Ապահովագրավճարը վճարվում է Բանկի կողմից:



### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԶԱՓԸ

Տարեկան 500,000 ՀՀ դրամ:



### ՈՐՔԱՆ Է ԶԿԱՏՈՒՅՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Չի նախատեսվում:



### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

- Երրորդ անձանց կողմից կեղծ բանկային քարտի կամ վճարման այլ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ չարտոնված գործարքներ իրականացնելու հետևանքով դրամական միջոցների ելքագրումը քարտի բանկային հաշվից,
- Ձեր կորցրած կամ գողացված քարտի օգտագործմամբ երրորդ անձանց կողմից չարտոնված գործարքներ իրականացնելու հետևանքով դրամական միջոցների ելքագրումը քարտի բանկային հաշվից, որը կատարվել է Բանկի կողմից քարտի արգելափակմանը նախորդող 24 ժամվա ընթացքում,
- Ձեր քարտի հաշվից գումարների դուրսգրումը կեղծված սլիպերի կամ տեղմինալների ստացականների հիման վրա, որոնցում արտացոլված է Ձեր կողմից գործարքների իրականացման ցուցումը,
- Երրորդ անձանց կողմից ավազակության/կողոպուտի ճանապարհով դրամական միջոցների հափշտակությունը՝ ժամը 08:00-21:00 ընկած ժամանակահատվածում Ձեր կողմից դրանց բանկոմատից ստացմանը հաջորդող 15 րոպեի ընթացքում,
- Կորած, գողացված կամ կեղծված բանկային քարտի/հաշվի օգտագործմամբ երրորդ անձանց կողմից չարտոնված գործարքներ իրականացնելու արդյունքում վարկային պարտավորությունների առաջացումը: Ընդ որում, հատուցման ենթակա է միայն մայր գումարի գծով պարտավորությունը,



### ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ՌԵՍՈ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 11.02.2019թ.-ի որոշմամբ հաստատված «Բանկի քարտապանների համապարփակ ապահովագրության կանոններ»-ում և 24.07.2012թ.-ի որոշմամբ հաստատված Դժբախտ դեպքերից ապահովագրության պայմաններում այցելելով ապահովագրական ընկերության գրասենյակ:



### ՈՐՏԵՂ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամբողջ աշխարհում, բացառությամբ Վիետնամի, Լաոսի, Կամբոջայի, Մյանմայի, Թայլանդի, Բրունեյի, Արևելյան Թիմորի, Ինդոնեզիայի, Ֆիլիպինների, Մեքսիկայի, Բրազիլիայի, Եգիպտոսի, Ուկրաինայի, Հյուսիսային Օսեթիայի, Կաբարդինո-Բալկարիայի Հանրապետության, Սիրիայի, Լիվիայի, Իրաքի, Աֆղանստանի, Ալժիրի:



### ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում է 1 (մեկ) տարի ժամկետով:

- Ապահովագրական պատահարի հետևանքով քարտի վերաթողարկման ծախսերը, բայց ոչ ավել քան ապահովագրական գումարի 1%-ը,
- Երրորդ անձանց կողմից Ձեզ պատկանող ձեռքի պայուսակի, դրանում գտնվող քարտի, անձը հաստատող փաստաթղթերի, Ձեզ պատկանող անշարժ և/կամ շարժական գույքի բանալիների հափշտակության հետևանքով պատճառված վնասը, բայց ոչ ավել քան ապահովագրական գումարի 10%,
- Բանկումատից քարտով գումարի ստացման ժամանակ երրորդ անձանց հարձակման հետևանքով Ձեր առողջությանը պատճառված վնասը, որը հանգեցրել է ֆիզիկական վնասվածքներին, աշխատունակության մշտական կորստին (I, II կամ III կարգի հաշմանդամության) կամ մահվան:

 **ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ**

- Անմիջապես արգելափակել քարտը և առաջին իսկ հնարավորության դեպքում, բայց ոչ ուշ, քան պատահարի պահից 48 ժամվա ընթացքում վանգահարել (+374 60) 50 57 57 շուրջօրյա հեռախոսահամարով,
- Քարտի հափշտակության կամ գողության հայտնաբերման, ինչպես նաև երրորդ անձանց կողմից հարձակման դեպքում անմիջապես, սակայն ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում դիմել ՀՀ ոստիկանություն կամ օտարերկրյա պետության համապատասխան պատկան (իրավասու) մարմիններին: Այլ դեպքերում վերոնշյալ մարմիններին անհապաղ տեղեկացնելն անհրաժեշտ է միայն, եթե Բանկի կողմից տրվել է պաշտոնական պատասխան այն մասին, որ չարտոնված էլքագրված գումարը ենթակա չէ վերադարձման Բանկի կողմից,
- Բանկին ներկայացնել գործարքը բողոքարկելու վերաբերյալ դիմում Բանկի կողմից սահմանված ժամկետում,
- Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունը ի հայտ գալու պահից 3 օրվա ընթացքում Ապահովագրական ընկերությանը ներկայացնել փոխհատուցման դիմում-պահանջ և Ապահովագրության պայմաններով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

**ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ**

- Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.
- Քարտապանի կողմից քարտը ստոպ-լիստ չզցելու (արգելափակելու), ինչպես նաև քարտի PIN կոդի տվյալները կողմնակի անձանց հասանելի դարձնելու կամ նման կասկածի դեպքում,
  - Քարտապանի կանխամտածված և/կամ անօրինական գործողությունների (անգործության) հետևանքով,
  - Քարտապանի կողմից բանկային քարտի օգտագործման կանոնների և/կամ սպասարկման կարգի պայմանագրի խախտման հետևանքով,
  - Քարտապանի կողմից բանկային քարտերի օգտագործումը և սպասարկումը կարգավորող ՀՀ գործող օրենսդրության և այլ իրավական ակտերի խախտման արդյունքում,
  - «ՌԵՍՈ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 11.02.2019թ.-ի որոշմամբ հաստատված «Բանկի քարտապանների համապարփակ ապահովագրության կանոններ»-ով և 24.07.2012թ.-ի որոշմամբ հաստատված ԴԺբախտ դեպքերից ապահովագրության պայմաններով սահմանված այլ դեպքերում:

**ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ**

- Ապահովագրական հատուցում չի տրամադրվում, եթե վնասը փոխհատուցվել է այլ աղբյուրներից,
- Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան: